

ԴՐՈՒԱԳ Ը.

Վերջին գործք Լեւոնի

Ա. Ծնունդ Ջապելի եւ կարգել ժառանգ թագաւորութեան, խօսելով նմա փեսայ գորդի թագաւորին Ունգարաց.

Ի չափ հասեալ դշխոյին Սիպիլայ՝ ընծայեաց յամի 1215 կամ 1216, դուստր ծիրանածին, զփափկագոյնն փարազնուհեաց Սիսուանայ եւ զմենափառ, Ջապել. որում եթէ օրէն էր ասել, **Խրքեւծին** Լեւոնեան մարգարտի՝ բագումք ցանկացան, եւ ոչ հասին, այլ Հեթմեանն Հեթմոյ վիճակեցաւ յետոյ զուգապսակիլ եւ ժառանգել ընդ նմին զգահ եւ զփառս Լեւոնի: Աստուածատուր իմն շնորհ համարեցաւ եւ սա, ' իծերութեանն՝ եթէ ոչ արու, գոնեա դուստր մի սիրասնունդ ունել, յոր վստահանայր հոգւովն՝ հաստատել զժառանգութիւն գահուն եւ բաղդին, որոյ վասն այնքան ամս հոգայր եւ վարանէր. եւ թէպէտ տեսաք ' իվեր անդր՝ ' իվադուց ցայն ժամ ընտրեալ եւ ցուցեալ իւր յաջորդ գոհութեն, այլ յետ վերջին անգամ եւ լիապէս հաստատելոյ զնա՝ խեղհական աթոռն Անտիոքայ (1216), արհամարհութիւն ինչ կրեալ յերիտասարդէն՝ երկմտեալ էր՝ ինմանէ: Ոչ պատմի ստուգիւ անգիտութիւն Ռուբինի, այլ համարին ոմանք եթէ՝ ի գահակալելն՝ ճեպեցոյց զհայրագիր իւր եւ զամենախնամ դաստիարակն՝ փութով մեկնիլ յԱնտիոքայ²¹³, որպիսի եւ է մտօք: Արդ տեսեալ Լեւոնի զդստրիկն կայտառ եւ բարենշան՝ մինչ խորհէր յանփորձ ճակատ նորին պատշաճեցուցանել զպսակն արքունի, ծանեաւ՝ ինմին խորհրդի լինել եւ զաւագանին իւր. որք, թերեւս նոյնպէս խտրեալք էին՝ ի Ռուբինէ, եւ համարձակ ասացին ցթագաւորն, եթէ՝ քանզի ետ քեզ Աստուած զաւակ ըստ սրտի քում, «արա զնա տէր ժառանգութեան քո. եւ լո՛յծ զերդումն մեր զոր արարեալ եմք Ըռովբինի, եւ կապեա ընդ դստեր քո. եւ մեք ծառայեմք

²¹³ Պարզեւագիր Ռուբինի առ Գենուացիս (փեքր. 1216), յայտ առնէ զի անդ յԱնտիոք էր Լեւոն, քանզի եւ ստորագրեաց նմին. իսկ ՚ի միւսումն՝ որ յ'7 ապրիլի տարւոյն առ Պի-գացիս՝ զի չէր անդ: